ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 դեկտեմբերի 2013 թվականի N 671-Ա
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ և 145-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի N 140-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզական և Արտավազ համայնքների ավագանիների անդամների, Արտավազ և Հացավան համայնքների ղեկավարների հերթական ընտրություններ՝ 2014 թվականի մարտի 9-ին:

2.Առաջարկել թիվ 25, 26 և 27 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին՝ հայտարարել ընտրության օր, սահմանված կարգով կազմակերպել ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումներ:

3. Առաջարկել Արզական, Արտավազ և Հացավան համայնքների ղեկավարներին՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի համաձայն իրականացնել համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունները:

4. 1-ին կետում նշված համայնքների նորընտիր տեղական ինքնակառավարման մարմինները լիազորությունները պետք է ստանձնեն նախորդների լիազորությունների ժամկետի ավարտման հաջորդ օրը:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս. Հակոբյանի վրա:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ